

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հայ ժողովրդի դարավոր մշակույթը վաղուց է գրավել գիտական աշխարհի ուշադրությունը: Գտնվելով Արևելքի և Արևմուտքի մշակութային խաչուղիներում՝ հայ միջնադարյան արվեստը և, հատկապես, գրականությունը մեծ նյութ է հայթայթում Միջերկրականի ավազանի տարբեր մշակույթների բազմապան հարցերի լուսաբանման համար: Սա է պատճառը, որ սանավանդ ԺԹ դարում Եվրոպայում մեծ հետաքրքրություն առաջացավ հայ մշակույթի նկատմամբ: Եվրոպական լեզվաբանությունը բացահայտեց հայերենի հնդեվրոպական ծագումը՝ որպես առանձին ճյուղ հնդեվրոպական մայր նախալեզվից առաջացած լեզուների համակարգում: Եվրոպական բանասիրությունը բացահայտեց հայկական սկզբնաղբյուրների, մանավանդ թարգմանական գրականության բացառիկ արժեքը քրիստոնեական վաղ միջնադարի մշակույթի ուսումնասիրման համար: Մեկ խոսքով Եվրոպայի համար հայտնագործություն եղավ հայ մշակույթի հետ ծանոթությունը: Հետևհետև, սակայն, հայ մշակույթի ուսումնասիրությունը դադարեց մնալ եվրոպացիների մենաշնորհը: Նախ Մխիթարյան հայրերը, ապա և Պոլիան ու Թիֆլիսը, Մոսկվան ու Լենինգրադը վերցրեցին նախաձեռնությունը, հայ մեծանուն գիտնականներ խորացան մայր ժողովրդի ստեղծած բարձրարժեք մշակույթի ուսումնասիրության մեջ, և կարճ ժամանակում ստեղծվեց հայ բանահյուսության, գրականության, ճարտարապետության և այլ արվեստների ուսումնասիրության հսկայական գրադարան:

Սակայն հայ մշակույթի համակողմանի և համապարփակ ուսումնասիրությունն իրականացավ միայն ու մանավանդ Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ տարիների հետևողական ու տքնաջան աշխատանքով, բարձրակարգ ու խորապես մասնագիտացված ուսումնական և գիտական հաստատություններով: Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի համակարգի՝ լեզվի, գրականության, արվեստի, պատմության և փիլիսոփայության ինստիտուտների, ինչպես նաև Երևանի պետական համալսարանի և մանկավարժական ինստիտուտի համապատասխան ճյուղերի հարյուրավոր գիտնականներ տարիների քրտնաջան և մանրակրկիտ ուսումնասիրություններով հայագիտությունը բարձրացրին այնպիսի մակարդակի, որ Երևանը վճռորոշ խոսքի իրավունք նվաճեց հայագիտության մեջ: Հայաստանը դարձավ իր մշակույթի իրավատեր՝ պետական արժանապատվությամբ և բարձր գիտական պատրաստականությամբ:

Ահա թե ինչու վերջին տարիներին հաճա-

խակի դարձան հայ մշակույթին նվիրված միջազգային գիտաժողովները Երևանում. հայ արվեստի, հայերենագիտության, ահավասիկ և հայ միջնադարյան գրականության միջազգային գիտաժողով: Գիտաժողովը տեղի ունեցավ սեպտեմբերի 14—20-ը Երևանում և Լենինականում:

Բավական է մի հայացք նետել գիտաժողովի արտասահմանցի մասնակիցների ցանկին՝ համոզվելու համար, որ աշխարհի չորս ծագերից գիտնականներ են եկել՝ իրենց հետազոտությունների արդյունքները վիճարկելու իրենց հայաստանցի և Խորհրդային Միության կանապան քաղաքներից եկած գործակիցների հետ. քաղաքներ Մոսկվա, Լենինգրադ, Բաքու, Թբիլիսի, երկրներ ԱՄՆ, Անգլիա, Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, ԳԴՀ, ԳՖՀ, Իտալիա, Լեհաստան, Լիբանան, Լյուքսեմբուրգ, Կանադա, Հունգարիա, Ճապոնիա, Մոնղոլիա, Նիդեռլանդներ, Ֆրանսիա և այլն:

Գիտաժողովն աշխատեց երեք մասնաճյուղերով.

ա) Գեղարվեստական գրականություն.

բ) Գիտական գրականություն.

գ) Գրական-մշակութային առնչություններ և թարգմանական գրականություն:

ՀՍՍՀ ԳԱ-ի, Մատենադարանի և պետական համալսարանի դահլիճներում կարդացվեցին հարյուրավոր զեկուցումներ հայ միջնադարյան գրականության արդեն արծարծված և նորոգ կարևորություն ստացած բազում խնդիրների մասին: Եվ այն, որ զեկուցումների ճնշող մեծամասնությունը ներկայացնում էին Խորհրդային Հայաստանի գիտա-ուսումնական հաստատությունները, հետևանք չէ միայն այն բանի, որ գիտաժողովը տեղի ունեցավ Երևանում, այլ ցուցանիշն է այն մեծ դերի, որ ունի Երևանն այսօր հայագիտության բոլոր բնագավառների կարգացման մեջ:

Սակայն գիտաժողովը չեղավ միայն գիտական մտքի փոխանակման հանդիսավայր, այլ առիթ եղավ, որ Խորհրդային Միության քաղաքներից և արտասահմանյան երկրներից եկած հյուրերը կենդանի շփում ունենան հայ ժողովրդի և հայ մշակույթի հետ: Կազմակերպվեցին զբոսարշավներ դեպի ճարտարապետական հուշարձաններն ու նոր, ծաղկուն բնակավայրեր, որտեղ հարուստ մշակույթի ժառանգորդ հայ ժողովուրդը ամեն օր կերտում է իր նոր պատմությունը, ուռճացնում է իր մշակութային գանձարանը:

Եվ ահա սեպտեմբերի 18-ին, հետմիջոցին, գիտաժողովի մասնակիցները եղան Մայր Աթոռում: Հյուրերին Վեհարանում ընդունեց Վեհափառ Հայրապետը և ողջունեց նրանց՝ ասելով.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

Ես այս պահին շատ հուզված եմ և նաև անհունորեն ուրախ, որ Սուրբ Էջմիածնի հովանու տակ գոհունակությունն ունեմ և պատիվը ձեզ ընդունելու այստեղ՝ Գահաստահում:

Դուք մշակույթի գործիչներ եք, հայ մշակույթին ծառայողներ՝ գիտական ու հայասիրական զգացումներից մղված, որպեսզի առավել կարգանա հայ մշակույթի ուսումնասիրության գործը: Ես ամենից առաջ իմ շնորհակալությունը ուզում եմ հայտնել ձեզ բոլորիդ՝ և՛ մեր Երևանի գիտնականներին, և՛ արտասահմանից ժամանած հայ մասնագետներին, և՛ ի մասնավորի օտարազգի գիտնականներին՝ ֆրանսիացիներ, ամերիկացիներ, անգլիացիներ և գուցե գերմանացիներ, որոնք իրենց հայ եղբայրների հետ ձեռք-ձեռքի տված աշխատում են ավելի ու ավելի պարզաբանել, լուսաբանել, լույս տարածել մեր անցյալի մշակույթի արժեքների վրա: Սա մեծ աշխատանք է, որ դուք կատարում եք, և մենք, կարծում եմ ազգովին, նաև մեր Եկեղեցին Հայաստանյայց, երախտապարտ ենք ձեզ բոլորիդ:

Ասացի մշակույթի գործիչներ, հայ մշակույթի ծառայողներ եք դուք: Մշակույթ բառը և հասկացությունը մասնավոր արժեք, կարևորություն ունի մեր ազգի համար, որովհետև, հատկապես, կարծում եմ, մշակույթով է, և մշակութային արժեքներով է, որ կարող ենք բնորոշել հայ ժողովուրդը իր հոգեկան անցյալ և ներկա գանձերով: Գերմանացիները անցյալ դարում մշակույթ հասկացության բնորոշումը ավելի պայծառացրին և արժանավոր բարձունքի հասցրին: Ինչպես գիտեք, կազմվեց այսպես կոչված **մշակույթի փիլիսոփայության ուսմունքը,** ըստ որի աշխարհում չկան ժողովուրդներ, այլ կան մշակույթներ: Գուցե մի քիչ չափազանցված ձևով է ասված, բայց ինչ-որ մեծ ճշմարտություն կա այս արտահայտության մեջ, որ մեզ՝ հայերիս համար, շատ հարազատ է: Մենք ուզում ենք, որ իսկապես այդպես լինի, որովհետև մեր ազգը, առավելապես իր մշակույթով կարող է իր երեսը բացել աշխարհի առաջ: Մենք հաճախ տեսնում ենք, որ այս մեր դարաշրջանին մանավանդ, ազգեր, ժողովուրդներ իրենց արմատներն են որոնում և իրենց ինքնությունն են բնորոշում, բանաձևում. բնական է, որ նաև մենք այդ աշխատանքին լծվենք: Այս ճանապարհի վրա հետևյալ հարցումներն են տրվում ընդհանրապես՝ ո՞վ ենք մենք, մենք՝ հայերս, որտեղի՞ց ենք գալիս, ի՞նչ ենք մենք: Այդ հարցումները իրենց տեղն ունեն,

անշուշտ, բայց կարծում եմ ավելի բնորոշ հարցում պիտի լիներ՝ ի՞նչ ենք արել մենք մեր պատմության ընթացքում, ինչո՞վ կկարողանանք մեր ինքնությունը ցույց տալ մեր կատարած գործերով, մեր իրագործումներով: Անշուշտ, խոսքը մշակութային իրագործումների մասին է: Ահավասիկ այդ հարցումին պատասխանելու համար եկած եք դուք այստեղ: Եվ կարծում եմ, որ ձեր պատասխանները մեծ արժեք կներկայացնեն մեր մշակութային կյանքի ճանաչման և կարգացման և հետագա նոր բարձունքների հասնելու համար:

Կրկին անգամ, հետևաբար, թույլ տվեք իմ սրտից բխած բարի մաղթանքները բաշխել ձեզ: Ես, իբրև կաթողիկոս Ամենայն Հայոց, անշուշտ նաև գիտակցությունը ունեմ, որ մեր Մայր Եկեղեցին անցյալում, միջին դարերում, մինչև մեր օրերից 50—60 տարի առաջ մշակույթ կոռող, մշակույթ դարբնող ուժը եղած է մեր ժողովրդի պատմության ընթացքում:

Ահա այս գիտակցությամբ կրկին անգամ իմ գոհունակությունը և շնորհակալությունն եմ հայտնում բոլորիդ:

Մաղթում եմ ուժ, եռանդ, մշտանորոգ ներշնչանքներ, որպեսզի շարունակեք ձեր գիտական գործունեությունը ի նպաստ հայ մշակույթին:

«Ողջ լերուք, կօրհնեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի մէնջ, ամէն»:

Ապա հյուրերը դիտեցին «Ալեք և Մարի Մանուկյան Գանձատուն»-ը, Մայր տաճարը՝ իր թանգարանային հարստություններով, և հրաժեշտ տվեցին Մայր Աթոռին՝ շարունակելու համար իրենց պատվաբեր աշխատանքը հայ մշակույթի ուսումնասիրության ասպարեզում:

ԹՂԹԱԿԻՑ